«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

N 6-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1–ին մասի 6)–րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եվ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետը և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եվ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ռեկտորի ընտրության կանոնակարգի 2.1–րդ, 2.2–րդ և 2.6–րդ ենթակետերը՝ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եվ սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ՝ Ինստիտուտ) ***որոշում է.***

1. Ինստիտուտի ռեկտորի թափուր պաշտոնի համար հայտարարել բաց մրցույթ:
2. Հոգաբարձուների խորհրդի քարտուղարին Ինստիտուտի ռեկտորի ընտրության կանոնակարգով սահմանված կարգով և ժամկետներում ապահովել մրցույթի անցկացման մասին հայտարարության հրապարակման, թեկնածուների հայտերի և անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման գործընթացը:
3. Ինստիտուտի ռեկտորի ընտրությունն անցկացնել 2021 թվականի հունվարի 11–ին Ինստիտուտի վարչական շենքի գիտական խորհրդի նիստերի դահլիճում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի նոյեմբերի 25–ից:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ
ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

2020թ. նոյեմբեր «24»

Երևան